



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

10.05.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԱՅ-ԱՄ-2018/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.04.2018թ. թիվ 03/26-3/6019-18 գրությամբ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.03.2018թ. թիվ 0456 գրության հիման վրա, 03.04.2018թ. թիվ 03/26-3/6019-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են հետևյալ հիմնավորմամբ.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի թիվ 26 չափաբաժնի մասով (38591200/4 քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր) հայտ է ներկայացրել նաև «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված N1՝ տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցով սահմանվել է Ընթացակարգի թիվ 26 չափաբաժնով սահմանվել է հետևյալը.

26	քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր	<p>CCX 13 արյան անալիզատորը նախատեսված պետք է լինի ամբողջական արյունից մինչև 19 չափված տեստերի անցկացման համար: Անալիզատորը պարտադիր պետք է ունենա՝ 10,5 ոլոյմ երկարությամբ սեստորային էկրան, հեղուկների ավտոմատ կալիբրավորում, QC վիճակագրություն, տվյալների ներդրված կառավարում, ավտոմատ սեմալեր, լրացուցիչ սկաներ, ներդրված կապիլյարային ադապտեր, QC տվյալների պահոց: Ներդրված նմուշի ստանդարտ ծավալը պետք է կազմի՝ 50 մկլ ամբողջական արյան միկրոնմուշ արյան գազերի համար/pH, 110 մկլ՝ բոլոր անալիզների համար, բացի CO-օքսիմետրիայից, 210 մկլ՝ բոլորի համար՝ ներառյալ CO-օքսիմետրիան: Անալիզատորի ֆիզիկական տվյալներն են՝ բարձրությունը՝ 43,7 սմ, լայնությունը՝ 56,7 սմ, խորությունը՝ 43,8 սմ:</p> <p>Էլեկտրականության հզորությունը պետք է կազմի՝ 90-264 VAC, 50/60 Hz, 350 W:</p> <p>Կալիբրավորումը՝ ընտրովի, 2,4,6 ժամը մեկ երկու-կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում, յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում: Անալիզների մակարդակները պետք է լինեն հետևյալը՝ A մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Կիրառվող նմուշներն են՝ ամբողջական արյուն, պլազմա, արտերիալ կամ կապիլյարային արյուն: ISO 9001, CSA, FDA (միայն in vitro հետազոտությունների համար) սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:</p>
----	---	---

Ընթացակարգի թիվ 26 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն: Վերջինս հրավերով սահմանված ժամկետում՝ հանձնաժողովին է ներկայացրել իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և

հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացվել է նկարագիր Ընթացակարգի հրավերի թիվ 26 չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի վերաբերյալ, որի համաձայն՝ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն, որպես «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ -18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժնի ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

Զ/Հ	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
26	քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր	Stat Profile pHOx Ultra with CO- Oximeter	NOVA BIOMEDICAL CORPORATION	ԱՄՆ	Արյան անալիզատորը նախատեսված է ամբողջական արյունից մինչև 20 չափված տեստերի անցկացման համար: <ul style="list-style-type: none"> • pH, PCO2, PO2, SO2% • Na, K, iCa, iMG, Cl • Glucose, Urea/BUN, Creatinine, Lactate • Hct, Hb • O2 Hb, HHb, COHb, MetHb, tBil Անալիզատորը ունի՝ 12,1 դյույմ երկարությամբ սենսորային էկրան, հեղուկների ավտոմատ կալիբրավորում, QC վիճակագրություն, տվյալների ներդրված կառավարում, լրացուցիչ (optional) սկաներավտոմատ սենսյվեր. QC տվյալների պահոց: Ներդրված նմուշի ստանդարտ ծավալը փոքր է քան 60 մկլ ամբողջական արյան միկրոնմուշ արյան գազերի համար/ pH, 120 մկլ՝ բոլոր անալիզների համար, բացի CO-օքսիմետրիայից, 210 մկլ՝ բոլորի համար՝ ներառյալ CO-օքսիմետրիան: Անալիզատորի ֆիզիկական

					<p>տվյալներն են՝ բարձրությունը՝ 43,7 սմ, լայնությունը՝ 56,7 սսմ, խորությունը՝ 43,8 սմ: Էլեկտրականության հզորությունը կազմում է՝ 90- 264 VAC, 50/60 Hz, 350W: Կալիբրավորումը՝ ընտրովի , 2 ժամը մեկ կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում, յուրաքանչյուր 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում: Անալիզների արդյունքների ստացման մակարդակները մեկ նմուշի չափման դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • A մակարդակ՝ 60 վայրկյան • B մակարդակ՝ 120 վայրկյան (ամբողջ 20 պարամետրերի (տեստերի) չափման դեպքում), կիրառվող նմուշներն են՝ ամբողջական արյուն, պլազմա, արտերիալ կամ կապիլյարային արյուն: ISO 9001, ISO 13485:2012 CSA, FDA (միայն in vitro հետազոտությունների համար) սերտիֆիկատների պատճենները կացվում են:
--	--	--	--	--	--

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն.

«Մրցույթի գնահատող հանձնաժողովը բոլոր մասնակիցների որակավորման չափանիշների փաստաթղթերը գնահատեց բավարար, բացի «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ից: Վերջինս թիվ 26 չափաբաժնի համար ներկայացրել է չհամապատասխանող տեխնիկական բնութագիր:

1. Պահանջվել է՝ ներդրված նմուշի ստանդարտ ծավալը պետք է կազմի 50մկլ ամբողջական միկրոնմուշ արյան գազերի համար/ pH, 110 մկլ՝ բոլոր անալիզների համար:

Տրվել է՝ ներդրված նմուշի ստանդարտ ծավալը փոքր է քան 60մկլ ամբողջական միկրոնմուշ արյան գազերի համար/ pH, 120 մկլ՝ բոլոր անալիզների համար:

2. Պահանջվել է՝ կալիբրավորումը ընտրովի 2,4,6 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում:

Տրվել է՝ կալիբրավորումը ընտրովի 2 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում յուրաքանչյուր 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում:

3. Պահանջվել է՝ A մակարդակ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում):

Տրվել է՝ A մակարդակ 60 վայրկյան (չի նշված նմուշների քանակը ժամում), B մակարդակ՝ 120 վայրկյան (չի նշված նմուշների քանակը ժամում), C մակարդակը բացակայում է: »

Ընկերությանը Պատվիրատուի կողմից ուղարկվել է ծանուցում, որով Ընթացակարգի գնումների համակարգողը հայտնել է, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով Ընկերությունը ներկայացրել է չհամապատասխանող տեխնիկական բնութագիր: Ընթացակարգի գնումների համակարգողը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից օրենքով և հրավերով սահմանված կարգով 22.03.2018թ. ի պատասխան Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության թիվ 4 արձանագրության, ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները և ուղարկվել է (քիմիական լաբորատորիայում կիրառվող սարք/արյան անալիզատոր) սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնութագիրը:

Ընկերությունը վերը նշված գրությամբ հայտնել է հետևյալը.

«1. Նմուշի ծավալի վերաբերյալ՝ մրցույթի չափորոշիչներում արյան ծավալի պահանջի վերաբերյալ լրիվ չի գրված: Ընկերությունը Պատվիրատուին ներկայացնում է նմուշի

ծավալի վերաբերյալ ամբողջական տվյալները: Ընկերության առաջարկած սարքում արյան զազերի և pH համար պահանջվում է 60ՄԿԼ ամբողջական արյուն: 105 մկլ ամբողջական արյուն CO-Oximetry և Total Bilirubin չափման համար: 120 մկլ միկրո նմուշ լրիվ պանելի համար, առանց CO-Oximetry: 210 մկլ ամբողջական արյան լրիվ պանելի համար, այդ թվում նաև CO-Oximetry-ի համար:

2. Կալիբրավորման վերաբերյալ.

Ընկերության կողմից առաջարկված սարքն ունի հնարավորություն՝ կալիբրավորումը ընտրովի 2,3,4,5 կամ 6 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում: Calibration frequency: 2 point: 2,3,4,5 or 6 hours (user defined). Կից ներկայավել է սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնագիրը անգլերենով:

Յուրաքանչյուր 30 կամ 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում:

Calibration frequency: 1 point: 30 or 45 minutes or with every sample (user selectable). Կից ներկայավել է սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնագիրը անգլերենով:

3. Պահանջվել է՝ A մակարդակ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Այս պահանջում A և C մակարդակները կրկնվում են, այդ պատճառով մենք C մակարդակը չենք նշել: Պահանջը՝ A մակարդակ 62 վայրկյան (38 նմուշ ժամում) և C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Մեր առաջարկության մեջ այդ պահանջը կազմում է 60 վրկ: A մակարդակը այն դեպքերի համար է, երբ չափում է արյան զազերը և pH: B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում) – պատվիրատուն նկատի է ունեցել սարքի հետևյալ ճշգրիտ պահանջը: Time from sample introduction to result availability: up to 124 seconds: Մենք հաստատում ենք, որ այս պահանջը մեր առաջարկությունում պահանջված է:

• Ինչ վերաբերում է 23 նմուշ ժամում-պատվիրատուն նկատի է ունեցել սարքի հետևյալ ճշգրիտ պահանջը՝ Optimal throughput when analyzer calibrated, awaiting specimens: 23 per hour: Մենք հաստատում ենք, որ այս պահանջը մեր առաջարկությունում պահանջված է:»

Այնուհետև, Ընկերությանն է ուղարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2018թ. թիվ 5 արձանագրությունը (ի դեպ որում նշված է մեկ այլ ծածկագիր), որի համաձայն Ընթացակարգի թիվ 26 չափաբաժնով որպես հաղթող մասնակից է նշված «ՊՐՈՄ-ՏԵՍ» ՍՊԸ-ն:

Փաստորեն, Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, սակայն հանձնաժողովը ըստ երևույթին չի ընդունել շտկումները և ըստ երևույթին մերժել է Ընկերության հայտը, սակայն մերժելու մասին ոչ մի նշում անգամ չկա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության մեջ:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որտեղ թիվ 26 չափաբաժնի մասով նշել է հետևյալը.

Չափաբաժին 26:

Գնման առարկա է հանդիսանում՝ քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	<<ՊՐՈՄ-ՏԵՍՏ >>ՍՊԸ	X		
2	<<Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն>>ՍՊԸ		X	Տեխ. բնութագրի անհամապատասխանություն

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/
1	<<ՊՐՈՄ-ՏԵՍՏ >>ՍՊԸ	X	27000000
	<<Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն>>ՍՊԸ		21990000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գին :

Ընկերությունը գտնում է, որ իր կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, ինչը լիովին բավարար էր Ընկերության

հայտը հրավերի պահանջներին համապատասխանող ճանաչելու և ընտրված մասնակից ճանաչելու համար:

Բացի այդ, «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն ունի հանրահայտ M&S InSTRUMENTS MEDICAL AND SCIENCE INSTRUMENTS VERTRIEBSGES.M.B.H արտադրող ընկերությունից հատուկ նամակ, որ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սարքը հանդիսանում է արտադրությունից դուրս եկած CCx-13-ի նորացված մոդելը, նույն տեխնիկական չափորոշիչներով և հնարավորություններով:

Այսպիսով, վերը շարադրվածի վերլուծությունից հետևում է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ, ինչը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ընկերությունը խնդրել է «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել և ՀՀ բողոքարկման խորհրդի ՍՑ-ԱՄ-2018/39 ծածկագրով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/39 ընթացակարգի շրջանակներում 10.04.2018թ. ժամը 10:30-ին և 20.04.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 20.04.2018թ. ժամը 10:50-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.03.2018թ. թիվ 0456 գրությամբ հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն թիվ 26

չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել, որի համար տրվել է իր կողմից հաստատված հայտարարություն Կարգի 32-րդ կետի «գ» ենթակետի համաձայն և ճանաչվել ընտրված մասնակից, սակայն Հավելված 6 և 6.1-ում արձանագրվել են անհամապատասխանություններ: Ընկերությանը, Կարգի 47-րդ կետի համաձայն, ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները, սակայն դրանք չեն շտկվել, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է տվյալ հայտը:

Գնահատող հանձնաժողովը մերժել է տվյալ հայտը հիմք ընդունելով ի սկզբանե և շտկումից հետո առկա անհամապատասխանությունները, մասնավորապես՝

պահանջված նմուշի ծավալը 50 մկ է, առաջարկվող սարքինը՝ 60 մկ, ինչը հանգեցնում է օգտագործվող արյան ծավալի մեծացմանը,

պահանջվում է բոլոր անալիզների համար 110 մկ, առաջարկվող սարքինը 120 մկ է, ինչը նույնպես բացասական մեծացում է,

ներբեռնված փաստաթղթերի մեջ բացակայում է հղում, որ A և C մակարդակները նույնն են, ինչպես նաև բացակայում է հստակ հղում C մակարդակի առկայության մասին,

B մակարդակի համար պահանջվում է 134 վրկ, առաջարկվող սարքինը այն մինչև 134 վրկ է, ինչը նշանակում է, որ պահանջը չի բավարարվում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/39 ընթացակարգի շրջանակներում 10.04.2018թ. ժամը 10:30-ին և 20.04.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.03.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 4ա արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.04.2018թ. թիվ 03/26-3/6019-18 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.03.2018թ. թիվ 0456 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը՝ հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-

նույն ժամանակ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

26	քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր	<p>CCX 13 արյան անալիզատորը նախատեսված պետք է լինի ամբողջական արյունից մինչև 19 չափված տեստերի անցկացման համար: Անալիզատորը պարտադիր պետք է ունենա՝ 10,5 ոչույմ երկարությամբ սենսորային էկրան, հեղուկների ավտոմատ կալիբրավորում, QC վիճակագրություն, տվյալների ներդրված կառավարում, ավտոմատ սեմալեր, լրացուցիչ սկաներ, ներդրված կապիլյարային ադապտեր, QC տվյալների պահոց: Ներդրված նմուշի ստանդարտ ծավալը պետք է կազմի՝ 50 մկլ ամբողջական արյան միկրոնմուշ արյան գազերի համար/pH, 110 մկլ՝ բոլոր անալիզների համար, բացի CO-օքսիմետրիայից, 210 մկլ՝ բոլորի համար՝ ներառյալ CO-օքսիմետրիան: Անալիզատորի ֆիզիկական տվյալներն են՝ բարձրությունը՝ 43,7 սմ, լայնությունը՝ 56,7 սմ, խորությունը՝ 43,8 սմ: Էլեկտրականության հզորությունը պետք է կազմի՝ 90-264 VAC, 50/60 Hz, 350 W: Կալիբրավորումը՝ ընտրովի, 2,4,6 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում, յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում: Անալիզների մակարդակները պետք է լինեն հետևյալը՝ A մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Կիրառվող նմուշներն են՝ ամբողջական արյուն, պլազմա, արտերիալ կամ կապիլյարային արյուն: ISO 9001, CSA, FDA (միայն in vitro հետազոտությունների համար) սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:</p>
----	---	--

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Մինևույն ժամանակ նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից Ընթացակարգի 26-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Զ/Ը	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
26	քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր/արյան անալիզատոր	Stat Profile pHox Ultra with CO-Oximeter	NOVA BIOMEDICAL CORPORATION	ԱՄՆ	Արյան անալիզատորը նախատեսված է ամբողջական արյունից մինչև 20 չափված տեստերի անցկացման համար: <ul style="list-style-type: none"> pH, PCO2, PO2, SO2% Na, K, iCa, iMG, Cl Glucose, Urea/BUN, Creatinine, Lactate Hct, Hb O2 Hb, HHb, COHb, MetHb, tBil Անալիզատորը ունի՝ 12,1 ոլյույմ երկարությամբ սենսորային էկրան, հեղուկների ավտոմատ կալիբրավորում, QC

					<p>վիճակագրություն, տվյալների ներդրված կառավարում, լրացուցիչ (optional) սկաներ Ավտոմատ սենսյուր. QC տվյալների պահոց: Ներդրված նմուշի ստանդարտ ծավալը փոքր է քան 60 մկլ ամբողջական արյան միկրոնմուշ արյան գազերի համար/ pH, 120 մկլ՝ բոլոր անալիզների համար, բացի CO-օքսիմետրիայից, 210 մկլ՝ բոլորի համար՝ ներառյալ CO-օքսիմետրիան:</p> <p>Անալիզատորի ֆիզիկական տվյալներն են՝ բարձրությունը՝ 43,7 սմ, լայնությունը՝ 56,7 սմ, խորությունը՝ 43,8 սմ: Էլեկտրականության հզորությունը կազմում է՝ 90-264 VAC, 50/60 Hz, 350W: Կալիբրավորումը՝ ընտրովի, 2 ժամը մեկ կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում, յուրաքանչյուր 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում:</p> <p>Անալիզների արդյունքների ստացման մակարդակները մեկ նմուշի չափման դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • A մակարդակ՝ 60 վայրկյան • B մակարդակ՝ 120 վայրկյան (ամբողջ 20 պարամետրերի (տեստերի) չափման դեպքում), կիրառվող նմուշներն են՝ ամբողջական արյուն, պլազմա, արտերիալ կամ կապիլյարային արյուն: <p>ISO 9001, ISO 13485:2012 CSA, FDA (միայն in vitro հետազոտությունների համար)</p>
--	--	--	--	--	--

					սերտիֆիկատների պատճենները կացվում են:
--	--	--	--	--	---

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 26-րդ չափաբաժի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ ներդրված նմուշի ստանդարտ ծավալը պետք է կազմի 50 մկլ ամբողջական միկրոնմուշ արյան գազերի համար/ pH, 110 մկլ՝ բոլոր անալիզների համար, սակայն ներկայացված տեխնիկական բնութագրում նմուշի ստանդարտ ծավալը փոքր է քան 60 մկլ ամբողջական միկրոնմուշ արյան գազերի համար /pH, 120 մկլ՝ բոլոր անալիզների համար: Պահանջվել է կալիբրավորում ընտրովի 2,4,6 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում, սակայն ներկայացված տեխնիկական բնութագրի համաձայն՝ կալիբրավորումը ընտրովի 2 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում յուրաքանչյուր 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում: Պահանջվել է A մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), սակայն ներկայացվել է A մակարդակ՝ 60 վայրկյան (չի նշված նմուշների քանակը ժամում), B մակարդակ՝ 120 վայրկյան (չի նշված նմուշների քանակը ժամում), C մակարդակը բացակայում է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 21.03.2018թ. ծանուցել է «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ Ընկերությունը ներկայացրել է տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը և (քիմիական լաբորատորիայում կիրառվող սարք/արյան անալիզատոր) սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնութագիրը:

Նշված գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«1. Նմուշի ծավալի վերաբերյալ՝ մրցույթի չափորոշիչներում արյան ծավալի պահանջի վերաբերյալ լրիվ չի գրված: Ընկերությունը Պատվիրատուին ներկայացնում է նմուշի ծավալի վերաբերյալ ամբողջական տվյալները: Ընկերության առաջարկած սարքում արյան զագերի և pH համար պահանջվում է 60ՄԿԼ ամբողջական արյուն: 105 մկլ ամբողջական արյուն CO-Oximetry և Total Bilrubin չափման համար: 120 մկլ միկրո նմուշ լրիվ պանելի համար, առանց CO-Oximetry: 210 մկլ ամբողջական արյան լրիվ պանելի համար, այդ թվում նաև CO-Oximetry-ի համար:

2. Կալիբրավորման վերաբերյալ.

Ընկերության կողմից առաջարկված սարքն ունի հնարավորություն՝ կալիբրավորումը ընտրովի 2,3,4,5 կամ 6 ժամը մեկ երկու կետով ամբողջովին ավտոմատ կալիբրավորում: Calibration frequency: 2 point: 2,3,4,5 or 6 hours (user defined). Կից ներկայավել է սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնագիրը անգլերենով:

Յուրաքանչյուր 30 կամ 45 րոպեն մեկ ընտրովի մեկ կետով կալիբրավորում:

Calibration frequency: 1 point: 30 or 45 minutes or with every sample (user selectable). Կից ներկայավել է սարքի ընդլայնված տեխնիկական չափորոշիչների բնագիրը անգլերենով:

3. Պահանջվել է՝ A մակարդակ 62 վայրկյան (38 նմուշ ժամում), B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում), C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Այս պահանջում A և C մակարդակները կրկնվում են, այդ պատճառով մենք C մակարդակը չենք նշել: Պահանջը՝ A մակարդակ 62 վայրկյան (38 նմուշ ժամում) և C մակարդակ՝ 62 վայրկյան (38 նմուշ ժամում): Մեր առաջարկության մեջ այդ պահանջը կազմում է 60վրկ: A մակարդակը այն դեպքերի համար է, երբ չափում է արյան զագերը և pH: B մակարդակ՝ 134 վայրկյան (23 նմուշ ժամում) –պատվիրատուն նկատի է ունեցել սարքի հետևյալ ճշգրիտ պահանջը: Time from sample introduction to result availability: up to 124 seconds: Մենք հաստատում ենք, որ այս պահանջը մեր առաջարկությունում պահպանված է:

Ինչ վերաբերում է 23 նմուշ ժամում-պատվիրատուն նկատի է ունեցել սարքի հետևյալ ճշգրիտ պահանջը՝ Optimal throughput when analyzer calibrated, awaiting specimens: 23 per hour: Մենք հաստատում ենք, որ այս պահանջը մեր առաջարկությունում պահպանված է:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.03.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 4ա արձանագրությամբ կայացված որոշմամբ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված շտկումը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպես, արձանագրելով անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները: Ընկերությունը կատարելով իր պարտականությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է շտկումները, որոնք սակայն գնահատվել են ոչ բավարար:

Միևնույն ժամանակ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «ՄևՍ ինստրումենթս» կազմակերպության, որպես Նովա Բիոմեդիկալ Կորպորացիայի պաշտոնական ներկայացուցչի 22.03.2018թ. տրված տեղեկատվական նամակը, համաձայն որի «Stat Profile CCX 13» մոդելի արյան անալիզատորն այլևս չի արտադրվում, նշված մոդելը փոխարինվել է «Stat Profile pHox Ultra+ COOX» նորացված մոդելով, որը համաձայն նույն նամակի մեջ նշված ցուցանիշների իր մեջ ներառում է «Stat Profile CCX 13» մոդելի արյան անալիզատորին բնորոշ ֆունկցիոնալ հատկանիշները:

Ուսումնասիրելով «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի

շտկված տեխնիկական բնութագիրը (ապրանքի ամբողջական նկարագրությունը), համաձայն որի առաջարկվող արյան անալիզատորի մի շարք հատկանիշները համընկնում են հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի հատկանիշներին, ինչպես նաև հաշվի առնելով «ՄևՍ ինստրումենթս» կազմակերպության համապատասխան նամակը, համաձայն որի Ընթացակարգի հրավերի 26-րդ չափաբաժնով նախատեսված CCX 13 արյան անալիզատորն այլևս չի արտադրվում և այն փոխարինվել է ավելի նոր կատարելագործված մոդելով, որը և առաջարկվել է Ընկերության կողմից կողմից, ինչպես նաև հաշվի առնելով «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի դրսևորած վարքագիծը «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, գտնում եմ, որ Ընկերությունը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն: Դրա հետ մեկտեղ Ընկերությունը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացրել է նշված անհամապատասխանությունների շտկումները, դրանով իսկ կատարելով անհամապատասխանությունը շտկելու իր պարտականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.04.2018թ. թիվ 03/26-3/6019-18 գրությամբ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02548673) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ